



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

180 ՂՐԱՏՁԻ ԳՐՈԴԱՐԱՆ

Գ. Գ. ԳՈՈՒՅԵԵՎ

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԶԻՉՆԵՐԻ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՑԵՎ ԵՐԱՆ  
ԴԵԿԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ



ԳՈՒՅԵԵՎ 1931 ԳՈՒՅԵԵՎ

23.07.2013

1 DEC 2006

25 SEP 2006

ՅԱԿՈՒՅ

Դ-85

ԳՅՈՒՂՔՉԻՉԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄՊ

գ. գ. ՊՈՍՏԻՇԵՎ

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԶԻՉՆԵՐԻ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ  
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՅԵԼՈՒՅԹ ՀԿԿ/Բ) ԿԿ 5-IV-31 թ.

ԿՈԶՄ-ՀՐԱՀԱՆԴՑՈՎԱՆ ԲԱԺՆԵ

ԽՈՐՀՄԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՑԻՄ

ԹԱՐ. գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

1009  
30855



9990

1931

ՅԵՐԵՎԱՆ

ԽՈՐՀՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄՏԿ-Ի ՑԵՎ ԽՈՇՈ-  
ՐԱԴՈՒՅՆ ԿՈԼՏՆՏԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԶԻՉՆԵՐԸ

ԿՈՒՍԱՇԽԱՏՎՆԵՐԻ ՀԵՆԱԿԵՑՆԵՐՆ ԵՆ  
ԳՅՈՒՂՈՒՄ

Գաղառների վերացումից հետո շրջանները ձեռք  
բերին մեծ ինքնուրույնություն և սկսեցին զգալ մեծ  
պատասխանատվություն կուսակցության և խորհրդա-  
դային իշխանության նրանց հանձնարարած գործի հա-  
ժար: Շրջանները՝ գուցե և վոչ բոլորը և վոչ այնպէս,  
ինչպես հարկավոր և, համենայն դեպք նշանակալից  
չափով ամբացել են աշխատողներով, ի հաշիվ վերաց-  
ված զավառների ակտիվի:

Չնայած որան՝ դեռևս շրջաններում աշխատողնե-  
րը պակաս են: Շրջաններում վորակյալ աշխատողների  
պակասը առոր կերպով զգացվում է նաև նրա համար,  
վոր կուսակցության յերկրային և մարդային կոմիտե-  
ները, ինչպես և բոլոր յերկրային և մարդային այլ  
կազմակերպությունները դեռևս չեն կարողացել համա-  
պատասխան կերպով վերակառուցել ղեկավարությունը  
շրջանների նկատմամբ, հատկապես այնպիսի յերկրնե-  
րում (կրայ), մարզերում, աղդային հանրապետուու-  
թյուններում, վորտեղ հաշվվում են 200-300 և ավելի  
շրջաններ:

Այսպես և դյուզական շրջաններում աշխատողներ-

րի գյությունը։ Իսկ գյուղում աշխատանքը Հսկայական ե։ Գյուղի սոցիալիստական վերակառուցման դորձը, վորը վերջն յիրկու տարիների ընթացքում ծավալվել ե և շարունակվում ե ծավալվել հսկայական թափով ու չտեսնված տնմակերով, դյուղում դասակարգային ամենասուր պայքարի զյությունը—այս բոլորը պահանջում են կուսակցությունից և խորհրդային իշխանությունից չափաղանց ամուր և վորակյալ զեկավարություն նոր կոլտնտեսական դյուղի համար։

Ներկայումս հատկապես գյուղին անհրաժեշտ է զեկավարություն վոչ թե «ընդհանրապես», այլ այսպիսի զեկավարություն, վորի ընթացքում յուրաքանչյուր կոմունիստ, յուրաքանչյուր կոմյերիտական, յուրաքանչյուր անկուսակցական ակտիվիտ—կոլտնտեսական վոչ միայն իմանա, այլ և պարզ պատկերացնի իրեն, ինչպիսի պրակտիկ խնդիրներ են կանգնած իր և իր կոլտնտեսության առջև այսոր, և պիտի կանգնին վաղը։

Վերցնենք արտադրության մեջ, գործարանում, աշխատող կոմունիստին կամ կոմյերիտականին։ Նաշատ լավ գիտե, վոր սոցիալիզմի կառուցման խնդիրը —դա Ստալինդրադի տրակտորի գործարանի համար նշանակում ե, վորքան հնարավոր ե արագ կատարել արտադրական պլանը, վորովհետև տրակտորը հանդիսանում ե խոշորագույն դորձիք կոլեկտիվացման, գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում։ Դա հանդիսանում ե որինակելի և գործնական աղիտացիս սոցիալիզմի համար։

Դաղղյահներ պատրաստող գործարանում աշխատող կոմունիստի համար—այդ նշանակում ե, ինչ կոտ

ել լինի, կատարել զաղցյահների արտադրական պլանը 100 տոկոսով, վորովհետև այդ աջակցում ե Խորհրդային Միության մեջ կառուցվող հարյուրավոր և հաղարակոր գործարանների և Փաբրիկանների ժամանակին գործի գցելուն։ Իհարկե, գործարաններում ել կան բացառություններ, բայց մենք ավագալ գեազում չենք խոսում ընդհանուր կանոնից բացառություն կազմողների մասին։

Ահա սոցիալիզմի համար պայքարելու, սոցիալիզմի կառուցման գործի համար իր գերի այս դիտակացումը, վորն ունի ներկայումս սլրուետարիատը և առաջին հերթին նրա առաջավոր մասը, մենք պիտի դատարակենք, արթնացնենք, ամրացնենք կոլտնտեսականների և առաջին հերթին գյուղի առաջավոր մասի մեջ։

Յուրաքանչյուր կոլտնտեսական և առաջին հերթին ակտիվիստ, պիտի իրեն պարզ պատկերացնի, վոր յուրաքանչյուր ավել ցանած հեկտար հողը, ժամանակին ցանած և լավ մշակած արտը և գլխավորը՝ ցանքի հարյուր տոկոս կատարումը բոլոր կուլտուրաններից, վորոնց թվում և ուեխնիկական բույսերի, բերքահավաքի հաջող կազմակերպումը—մինիմում կորսուվ, յուրաքանչյուր ավել փութ բերքը ամեն մի հեկտարից, հացի, բանջարեղենի, մսի, ձիի մթերման հարյուր տոկոս կատարումը—այդ պայքար և սոցիալիզմի համար, պայքար սոցիալիզմի կառուցման համար, գամեր սոցիալիստական անտեսության համար նորանոր գործարաններ կառաւցող, կոմբայններ, տրակտորներ գաղղյահներ և մեքենաներ պատրաստող բանվորների մատակարարման գործի բարելավումն ե, գա

Հարված և դասակարգային թշնամուն—կուտակին, վը-  
նասարարին, դա Հոկտեմբերի բոլոր նվաճումների ամ-  
րացումն է :

Այս բոլորի համար անհրաժեշտ ե լուրջ բայլշե-  
պիկյան աշխատանք, իսկ այդ աշխատանքի համար հար-  
կավոր են մարդիկ : Մարդկանց հարցը զնել այնպես,  
ինչպես առաջ, հիմա արդեն չի կարելի, այսինքն՝ այդ  
մարդկանցը տա միայն ֆարբիկան,—գործարանը, քա-  
ղաքը : Յեզ արդեն դրա սուր կարեն ել չկա :

Կոլտնտեսական գյուղում առաջացել են մեր ամուր  
տաղանդավոր, լավագույն կաղըերը, վորոնք պատ-  
րաստ են իրենց կյանքը զսհելու կոլեկտիվացման գոր-  
ծի համար :

Նրանք լավ դիտեն, վոր սոցիալիզմի կառուցման  
գործում հիմնականը վճռվում է գործարանում, խորհ-  
անտեսությունում, ՄՏԿ, կոլտնտեսությունում : Բայց  
նրանք գեռ քիչ փորձ ունեն, գեռ բավարար գրադետ  
չեն, նրանց անհրաժեշտ ե ողնել, զեկավարել, ինչպես  
հարկն է :

Ի՞նչպես ոգնել առաջավոր մարտիկ կոլտնտեսական-  
ներին : Իհարկե, շրջանային կուսկոմիտեյի գերը այս  
գործում—առաջնակարգ, վճռական և հսկայական է :  
Բայց շրջանային կուսկոմիտեյում, շրջգործկոմում  
նույնպես քիչ են մարդիկ : Յեզ մենք չենք կարող նը-  
րանց անհրաժեշտ քանակությամբ մարդիկ տալ քա-  
ղաքից : Բոլորին հայտնի յե համ . կ. կ. (ր)կ. կոմիտեյի  
վորոշումը այն մասին, վոր յերկու տարի արդելվում  
ե գործարանից բանվորներ վերցնել : Այս վորոշումն  
քովանդակությունը միանդամայն հասկանալի յե :

Գործարանները ներկայումս աշխատում են հսկա-

յական լորիվածությամբ : Հին գործող գործարանները  
պիտի կաղըեր պատրաստեն նոր կառուցվող, կառուց-  
ված և աշխատանքի անցած գործարանների համար :

Միաժամանակ կոլտնտեսական գյուղի համար  
մարդկանց հարցը մեր առաջ կանգնեց իր ամբողջ հա-  
սակով : Կնշանակի—այնպես վերակասուցել կուսակցո-  
կան աշխատանքը գյուղում և կոլտնտեսության բնի-  
ջի զեկավարությունը, վորպեսդի այդ անհրաժեշտ  
զեկավարությունը ազահովի գյուղի և գյուղական  
շրջանային կենտրոնի աճող կաղըերի հաշվին :

Կրկնում ենք, մեզ հաջողվեց նախկին գավառների  
կաղըերի հաշվին վորոշ չափով ամրացնել գյուղական  
շրջանային կենտրոնները : Իհարկե այդ ինդիբը միովին  
դեռ չի լուծված : Ազգային կոմիտսակցությունների  
կենտրոնները, մարզային և յերկրային կոմիտեները  
պիտի շարունակեն գյուղական շրջաններն աշխատողնե-  
րով ամրացնել : Սակայն բացի դրանից՝ մենք չափա-  
ղանց խոչըր հնարավորություններ ունենք նշանակալից  
չափով բարեկալվելու կոլտնտեսական բնիշները, այդ  
պիտի և վողձ կոլտնտեսությունների զեկավարությու-  
նը : Այդ հնարավորությունը կայանում է խորհունտե-  
սությունների, ՄՏԿ և խոչըրագույն կոլտնտեսությու-  
ների մեջ : Խորհունտեսություններում մենք արդեն ու-  
նենք բավականին հաստատուն, միանդամայն ամրացած  
կուսակցական բնիշներ : Այնուեղ կան կոմունիստներ—  
բարձրորակ պլրութարներ . փականակաղործներ, ուու-  
զելիկներ, մեխանիկներ, այնուեղ կան կուսակցական—  
ինժեներներ, դիզուլանտեսներ, դիբենկոտորներ և տե-  
ղակալներ : Նույնը մենք ունենք ՄՏ Կայաններում :

Վերաց չափով թույլ, բայց ընդհանրապես շատ

Հառատատուն կադրեր մննք ունենք խոշորագույն կուտանտեսությունների : Ա. Տ. Կայանների և խոշորագույն կոլտնտեսությունների այդ բջիջները, համաձայն Համ. կ. կ. (բ) Կուտանտեսական մննք պետք ե վերածնենք կոլտնտեսական բջիջների և կոլտնտեսությունների այն հենակետների : Վորոնք ապահովեն կոլտնտեսական դյուղի ամուր ուղղությունը, կոնկրետ, բայց նվիրյան բազմակողմանի դեկավարությունը :

Ի՞նչպես այդ անել գործնականում : Խորհունտեսությունների և Մ. Տ. Կայանների և խոշորագույն կոլտնտեսությունների բջիջներին անհրաժեշտ և ամրացնել նրանց ըրջակա կոլտնտեսական բջիջները, վորպեսզի խորհունտեսության կամ Մ. Տ. Կայանի բջիջներեն կից կոլտնտեսական բջիջի նկատմամբ կատարի մոտավորապես գործարանային կուսակցական կոմիտեյի դերը : Այսպես և ասված կազմբյուրոյի պլանի նախարարանում, վորը հրապարակվել է մամուլում :

Կենտրոնական Կոմիտեյի վորոշումը մենք այդպես պետք և անցկացնենք կյանքում :

Քայց մի քանի ընկերներ այս շատ կարեվոր խնդիրը կամ չփոթում են կամ այլանդակում : Նրանք կամ մնաւմ են այդ հենակետներում—խորհունտեսության և Մ. Տ. Կայանների, խոշորագույն կոլտնտեսությունների բջիջներում—անպայման ստեղծել մի քանի սեկտորներ, ունենալ կոմիտեյի վճարովի հատուկ քարտուղար և այլն : Տվյալ դեպքում այդպիսի ձգտումը կառ սխալ է, կամ հապեալ : Այդ անել պետք չե, հակառակ դեպքում, յեթե անհրաժեշտ ել ե, ապա վորպես բացառություն—մի քանի շատ կայուն խորհունտեսության

կամ Մ. Տ. Կայանների բջիջներում, իրենց կադրերի հաշվին լիովին աճած, արդեն ամբացած բջիջներում : Այն ել այդ պիտի կատարել յերկրկոմի, մարդկոմի, կամ ազգային կոմկուսակցության ԿԿ-ի թույլտվությամբ, իսկ վորպես կանոն խորհունտեսության կամ Մ. Տ. Կայանի բջիջի, վորին ամբացվում և մոտակա կոլտնտեսական բջիջը, քարտուղարը հանդիպանում է միաժամանակ կուսկոմիտեյի (հենակետի) քարտուղար, ուրիշ խոսքով կաշխատի ըստ միատեղության (по совместительству) :

Տարբերություն կլինի միայն մի բանում. առաջներում այդ քարտուղարը և այդ բջիջը դրաղվում եյին միայն իրենց խորհունտեսությունով կամ Մ. Տ. Կայանով, իսկ ներկայումս նրանք պիտի իրագործեն իրենց կցված բջիջի դեկավարությունը : Տարբերություն կլինի և նրանում, վոր խորհունտեսության կամ Մ. Տ. Կայանի (հենակետի) բջիջի քարտուղարին, վորպես խորհունտեսության կամ Մ. Տ. Կայանի բջիջի քարտուղարի կընտրի իր բջիջը, բայց վորպես հենակետի քարտուղար, վոր աշխատում և գործարանային կոմիտեյի իրագունքներով, կընտրեն խորհունտեսությանը և Մ. Տ. Կայանին կցված կոլտնտեսական բջիջները : Բանք նրանում չե, վոր հենակետն իրեն ձեվացնի վորպես ապարատ այլ նրանում, վոր նա կարդավորի կոլտնտեսական բջիջների և ընդհանրապես կոլտնտեսությունների ներկայումս անհրաժեշտ դեկավարությունը :

Յերբ ԿԿ-ում այս հարցն առաջացակ, մննք այսպես եյինք դատում, վորպեսզի կոլտնտեսական բջիջներին և խորհրդային տնտեսական, քաղաքական և

կոլտուրական հարցերում ողնենք դործով՝ անհրաժեշտ և առաջին հերթին կոլտնտեսական բջիջները քաշել դեպի նրանց հիմնական կետերը—դեպի խորհարշումնություն, Ա. Տ. Կայան և բարելավել կազմակերպությունների և ըջդործկոմների դեկավարությունը կոլտնտեսական ըլջաններում :

Յենթաղրենք՝ մոտենում և գարնանացանը կամ աշնանացանը կոլտնտեսություններին անհրաժեշտ և պատրաստվել այդ խորը տնտեսական կամպանիային։ Այս գործում կոլտնտեսական բջիջը դերը փոքր չե։ Խորհումնության կամ Մ. Տ. Կայանի բջիջը, վորպես հետևկետ, պիտի հավաքի իրեն կցված կոլտնտեսական բրդիջների կամ քարտուղարներին, կամ ակտիվին, կամ բջիջներին ամբողջությամբ, իսկ յերբեմն և կոլտնտեսության անկուսակցական ակտիվին՝ միատեղ քննելու, թե ինչպես անցկացնել զարնանացանի կամ աշնանացանի կամպանիան, ինչպես կազմակերպել պերծի հավաքման դորձը, նրա գտումը, ինչպես սպառագործել պարարտանյութերը, ինչպես դասավորել ուժերը և այլն։

Փորձը ցույց տվեց, վոր կոլտնտեսություններում բերքանավաքը անցկացնել այնպես, ինչպես անց և կացված առաջ, չի կարելի։ Ներկայումս շատ վատ են ուղարկործվում ինվենտարը և բանվորական ուժը։

Անհրաժեշտ և այդ բոլոր հարցերը կազմակերպչորեն մշակել և նրանց շուրջը համախմբել կոլտնտեսականների ուշադրությունը։

Անհրաժեշտ և ողնել կոլտնտեսություններին անցնելու գործարքին։ Հարկավոր է կուսակցության և խորհրդական իշխանության վորոշումների համապատասխա-

խան կազմակերպել բերքի բաշխումը, պետք է կազմակերպված վճռական հարկահարված տալ սպառողական տրամադրություններին, այն և՝ բերքն ըստ չնչերի բաշխելուն։ Պետք է ըստ հոգս տանել ինվենտարի, տրակտորների և այլ արտադրական գործիքների համար։

Հարկավոր է ուժեղ կերպով դնել կոլտնտեսություններում համայնացված անասունների ավելացման հարցը, կարդավորել թունաբռնությունը։

Պետք է ագրոմինիմումից անցնել ավելի ծավալուն աշխատանքի՝ տիրապետելու ագրոնոմիական գիտելիքներին, այն տեխնիկային, վորը մացկում և գյուղատնտեսության մեջ։

Հարկավոր է տեխնիկական գրագիտություն։ Կոմունիստներին, կոմյերիտականներին, վողջ կոլտնտեսական ակտիվին պետք է դարձնել քաղաքականապես գրագետ։ Կոլտնտեսությունում կուլտուրական գործը պիտի է ծավալի ինչպես հարկն ե։

Այս բոլորի հետ միասին պետք է միշտ հիշել, վոր անհրաժեշտ և ուժեղ պայքար կուլտուրի դեմ։

Այս բոլորը խոսում են այն մասին, վոր կոլտնտեսական բջիջների և վողջ կոլտնտեսական կյանքի դեկավարությունը շատ լրջորեն բարդանում է։

Ահա այդ աշխատանքը գյուղական ըրջանային կուսակցական, կոմյերիտականների դեկավարությամբ պետք է ծավալեն հենակետները—խորհանտեսությունների, Ա. Տ. Կայանների—բջիջները։ Անհրաժեշտ, կազմակերպել հենակետային և նրանց կից կոլտնտեսական բջիջների միացյալ արտադրական խորհրդական գործիքներություններ, կազմակերպել խորհրդական համապատասխա-

Մ . Տ . Կայտններին կից հիմնական ուրավարանները , չըլուղատնտեսական գիտությունների պերապետաման խմբակներ , քաղամբակներ : Պետք է կաղմակերպել կոլտնտեսուհիների մեջ անդրադիտության վերացման աշխատանքները և այլն :

Կարո՞ղ ենք մենք այժմ բավարարել յուրաքանչյուր կոլտնտեսություն բոլոր անհրաժեշտ ուժերով և միջոցներով : Իհարկե, զեռևս վոչ : Բայց մենք կարո՞ղ ենք արդյոք ողնել այդ հենակետներին թեկուզ կուսակցական կազմակերպիչների , կուտաշխատավորների , կոմունիստ-դաստիառների , մասնագետների , դյուլատնտեսների , ինժեներների , անասնաբույժների և ուրիշների այցելությունների միջոցով : Իհարկե , կարող ենք : Յեթե այդ իրադրծվի , այն ժամանակ այդ կետերն իրոք բազա կլինեն կուսաշխատանքների համար դյուրում :

Մի քանի ընկերներ շտապում են և ստեղծում գործարանային կուսկոմիտեյի իրավունքներով աշխատող հենակետներ : Դրանցից այնքան ել արդյունք չի ըստացվում :

Այժմ դժվար ե զնահատական տալ աշխատանքի այն բոլոր նոր ձեփերին և մեթոդներին , վորոնք գործադրվում են տեղական աշխատողների կողմից : Անհրաժեշտ է արդյոք մտցնել խոշոր խորհունտեսություններում և կուտանտեսություններում գործարանների ցեխ-բջիջների կամ կուսակցական խմբերի նման որինակ , հողամասային բջիջներ , բրիդադներ և այլն : Անհրաժեշտ է դիտել , ուսումնագրել , հաջող , իրենց արդարացնող ճեղքերն ամրացնել , տարածել մյուս կայտնատեսություններում , իսկ անհաջողներից տղատվել :

Հենակետների գոյության դեպքում գյուղական շրջանային կուսկոմիտեներից պահանջվում ե ավելի վորակյալ զեկավարություն ցույց տալ այդ հենակետներին : Գյուղական շրջկոմները այդ պիտի հաշվի առնեն : Նրանք պիտի յելնեն այն հանդամանքից , վոր հենակետների վրա մեծ խնդիրներ են դրվում և վոր գյուղակուրն և , չըլկոմները պետք ե ձգտեն , վորպեսզի այդ կետերը լինեն իրոք հենարան և ապահովեն կոլտնտեսական բջիջի անհրաժեշտ սպնությունը , վորը նրանցից պահանջում է կուսակցության կենտրոնական կոմիտեն :

Հենակետների գոյությունն այժմ բնավ չի նշանակում , վոր շրջկոմները պետք ե թուլացնեն իրենց ուշադրությունը գեղի կուտանտեսական բջիջները :

Ընդհակառակն , անհրաժեշտ ե նրանց կողմից ավելի ուշադրություն և ողնություն :

Հենակետներում ինչպես հարկն ե աշխատանքը ծավալե՞լ են արդյոք յերկրկոմները , մարդկոմները և աղջային կ . կուսակցությունների կ . կոմիտեները : Վոչ , զեռ չեն ծավալել : Այս անհրաժեշտ և արձանագրել և ընդգծել ամենայն վճռականությամբ :

## ՈՒՓԵՂԱՑՆԵԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Զավադանց եյական նշանակություն ունեն հենակետների ու գյուղական շրջանային կուսկոմների կողմից կուտանտեսական բջիջներին զեկավարելու գործում հետեւյալ մոմենտները .

Կուտանտեսություններն աճում են և պետք ե աճեն և քանակով և վորտեկով : Կուտանտեսականների ակտի-

վությունը բարձրանում է : Կոլտնահսական ակտիվը  
վորոնում և աշխատանքի նոր ձեմեր ու մեթոդներ:  
Յեզ գա միանգամայն ընական է :

Բայց խորհանակեսության բջիջները և Մ. Տ. Կայա-  
նի բջիջները վորպես հենակետներ, պետք է հիշեն, վոր  
կոլտնահսությունը—խորհանակեսություն չե: Գյուղա-  
կան շրջկոմիների աշխատողները չպետք է մոռանան,  
վոր կոլտնահսությունը գործարան չե: Գործարանում  
նույնպես բջիջները յերբեմն աղավաղում են իրենց կու-  
սակցական զեկավարությունը և զրանով բարդացնում  
են արտադրության կարգավորման գործը: Կ. Կոմի-  
տեն շատ ամուր և դրեւ միանձնյա զեկավարության  
գործը գործարանում: Մեր գործարանային բջիջները  
միանձնյա զեկավարության լողունգը շատ զանդաղ են  
իրագործում: Կոլտնահսության մեջ վողջ կյանքը զե-  
կավարում և նրա ընտրովի վարչությունը:

Ճիշտ և, այնտեղ ել պետք ել լինի միանձնյա դե-  
կավարություն, այսինքն՝ վարչության նախագահը  
ուիստի վարչության վորոշումները համար և կայուն  
կերպով անցկացնի կյանքում: Յեզ նա, ով խանգա-  
րում են նրան այդ գործում, վնաս ե թերում: Երիտադիրն  
աշխատանքի ժամանակ պիտի լինի իր գործի կայուն  
զեկավարը, նրան պիտի լսեն: Յեզ յեթե բջիջը կամ  
նրա քարտուղարը խառնվում են արտադրական կար-  
գագրություններին և վարչության նախագահի կամ  
բրիգադիրի ցուցմունքներին, ապա այդ բջիջը խախ-  
տում և միանձնյա զեկավարության վերաբերյալ հրա-  
հունգը:

Խերհանտեսության մեջ և գործարանում կա յի-  
քակառը, իսկ կոլտնահսության մեջ ընտրովի վարչու-

թյուն: Ահա այս տարբերությունը մեր կոլտնահսական  
բջիջները—նաև ըրջկոմները—յերբեմն չեն հասկանում:  
Այսինտեսության և Մ. Տ. Կայանի բջիջները վոր-  
պես հենակետներ այս տարբերությունը նույնպես իս-  
կույն չեն հասկանա: Կ. Կոմիտեն բաղմաթիվ անգամ  
ասել ե, վոր ըրջկուսկոմները, կոլտնահսական բջիջ-  
ները չըրամայեն, կոլտնահսության վարչությանը  
վարչական հրահանգներ չարձակեն: Սակայն մենք դի-  
տենք, վոր յերբեմն կոլտնահսության վարչության  
նախագահին իրենք բջիջները, իրենք ըրջկոմները աղ-  
մինստրատիվ կարգով հրահանգում են, փոխարինում  
են ուրիշով և դրանով խախտում են ընտրական սկզբ-  
ունքը: Կենա: Կոմիտեն այժմ այդպիսի բջիջների  
նկատմամբ, վորոնք խառնվում են գործարանի վարչա-  
կան ուրծերին, ամենաալճուական միջոցներն ե ձեռք  
առնուամ (նույնիսկ վոչ միայն բջիջների, այլ և առան-  
ձին դեպքերում մարզկոմների և յերկրկոմների վե-  
րաբերմամբ):

Մենք պետք ե կատեգորիկ կերպով արգելենք կոլ-  
տնահսական բջիջներին վարչական հրահանգներ արձաւ  
կել կոլտնահսության վարչություններին: Ճիշտ և,  
«արգելել» խոսքը նույնպես պարունակում ե վարչա-  
կան կարգադրության ելեմենտ: Բայց այդ սարսափելի  
չե, յերբ անհրաժեշտ ե ամենավճռական կերպով ար-  
գելել:

Սակայն այդ քիչ և: Պետք ե սովորել կոլտնահսա-  
կան բջիջին, յուրաքանչյուր կոմունիստի և կոմյերի-  
տեկանի առանձին, ըրջանային կուսակցական կոմի-  
տեյի, յուրաքանչյուր աշխատողի, վորպեսզի հասկա-  
նան, վոր կոլտնահսական բջիջը կողմից վարչական

Հրահանգումները վնասակար են, սպանում են կողմանտեսականների ակախվությունը, լավ կողիք են տալիս կուլակի և կուլակային ելեմնատների ձեռքը: Չպետք ե մոռանալ, վոր կոլտնտեսություն յեկած գյուղացին —յերեկով սեփականատերն ե, վորը վարում եր իր ինքնուրույն սննդեսությունը: Իսկ կոլտնտեսության մեջ լինում են այսպիսի փաստեր. այսոր կոլտնտեսականին ընտրում են նախազահ, վաղը բջիջը նրան հեռացնում ե. այսոր կոլտնտեսական—գյուղացին նշանակվում ե բրիգադիր, վաղը բջիջը նրան հեռացնում ե. այսոր բջիջը նրան առաջ ե քաշում գոմերի կառավարչի պաշտոնի, վաղը բջիջը նրան տեղափոխում ե այլ տեղ և այլն: Այն ժամանակ կոլտնտեսականի ձեռքերը թուլանում են և ինքն իրեն մտածում ե. «այս ի՞նչ բան ե, յերեկ յիս աշխատում եյի իմ տանը, ինքս եյի իմ տերը, վոչ վոք ինձ չեր դիպչում, վոչ վոք ինձ չեր հրամայում, վոչ վոք ինձ այստեղից այնտեղ չեր նետում: Իսկ այսոր կոլտնտեսության մեջ եմ, թվում ե, թե ամեն ինչ լավ ե, ընդհանուր գործ ե, մեր գործն ե, կոլեկտիվ աշխատանքի շահն ինձ համար հասկանալի յե, իսկ ինձ այս ու այն կողմն են նետում, առանց հարցնելու այդ մասին»:

Ահա թե ինչի կարող ե հասցնել, իսկ տուանձին դեպքերում անպայման հասցնում ե, յեթե բջիջը հրամայում ե:

Այն զեկավարությունը, վորն ուշադրության չի առնում կոլտնտեսականին, վարպետ կենդանի մարդ և յերեկով տնտեսատեր լինելը, վորն իր արտօնահայտությամբ «ինքն եր տերը», —վատ զեկավարություն ե: Այս մեծ և չափազանց լուրջ հարց ե: Յերբեմն անհրա-

թեշտ և աշխատողին հեռացնել, յեթե նա չի կարագանում զործը տանել, կամ յեթե նա ուղղակի վնասակար ֆարդ է: Բայց պիտք ե այնպիս անել, վորպեսզի կոլունակության վարչությունը նրան հեռացնի: Յերբեմն անհրաժեշտ և տեղափոխել մի աշխատանքից մի այլ աշխատանքի, բայց այդ անել այնպիսի պայմաններում: Վոր նա վիրավորանք չողա: Մի ուրիշին անհրաժեշտ է հեռացնել աղմաւկով, վորպեսզի նրա հեռացմանը մասնակցի կոլտնտեսության վարչությունը, վորպեսզի այդ իմանան բոյոր կոլտնտեսականները, վորպեսզի այդ նախազգութացնի և դաստիարակի ուրիշներին: Բայց պիտի կարողանալ այդ կատարել չնորհքով, կոլունակության ակտիվի, վարչության, իսկ յերբեմն բրիգադի միջոցով, յեթե այդ վերաբերվում ե բրիգադին, և չափազանց զգուշությամբ, նախորոք սուուղեղով և վոչ թե ուղղակի զործադրել բջիջի մերկ վարչական հրահանդումը կոլտնտեսության վարչության գլուխ վրայով:

Զի կարելի տօել վոր մեր գյուղական շրջանային կոմիտեները վատ են աշխատում կամ կոլտնտեսական բջիշներն իրենց աշխատանքներում միայն բացառական կողմեր ունեն: Վոչ, յերբեք: Շրջանային կազմակերպությունները, կուսակցական կոմիտեները վատ չեն աշխատում, կատարում են խոշոր աշխատանք, կրում են իրենց ուսերի վրա մեծ բեռ: Բայց յերբեմն հիմնադրամին կողմեր և յերբեմն շատ ուուր պահանջությունը մենք գետ շատ ունենք և դրանց կողքով վոչ մի գեղքում չպիտի անցնենք: Շրջկոմներն, ինչպես առամ են, կոլտնտեսությունների վողջ աշխատանքը իրենց ուսերի վրա յեն առնում, իսկ շրջկոմներին



Թյունները գեռ թույլ են աշխատում. վաս են զեկա-  
վարում կողմնակառությունների տնտեսական կյանքը :  
Ինչու յե այդպես: Ասում են կաղղեր չկան: Հնարավոր  
չե: Բայց պատճառը կայանում է նաև նբանում, վար  
այնտեղ քիչ կոլտնտեսականներ կան:

Երջկաղընտմիության նման աշխատանքը ներկա-  
լումս անթույլատրելի յե: Պետք է ամենամոտ ժամա-  
նակում ռւղղել շրջկողմնութիւթյան աշխատանքները,  
նրանց դարձնել անտեսավես ավելի ակտիվ, ավելի  
զրագետ, ամուր կապել նրանց կողմնակառություններին,  
անցկացնել այնուղղ մեծ թվով կողմնականներ,  
կուսակցական և անկուսակցական: Սա հենակետների  
հետ անմիջական հարաբերություն չունի, սակայն ան-  
ողային անմիջական կապ ունի յերկրային և դյուզա-  
կան շրջանային կուսակղմակերպությունների հետ: Երջ-  
կոմները չեն կարող իրենց վրա վերցնել բոլոր աշխա-  
տանքների ծանրությունը, չեն կարող այդ անել—նաև  
յերկրային կուսակցական և խորհրդային կաղմակեր-  
պությունները:

Հարկափոր ե աշխատանքն այնպես դնել, վոր-  
պեսլի լավ աշխատեն հենց կողմնակառության զեկա-  
վար որդանները, կողմնական քջիջները, հենա-  
կետները, շրջանային կաղմակերպությունները և ապա-  
սովին կողմնական կաղմակերպությունների լավ  
գեկալարությունը, բայց վոչ թե փոխարիննեն նրանց:

## ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃ ԳՅՈՒՂՈՒՄ

Կուսակղմակերպությունների աճումը Մ. Տ. Կա-  
յանների և խորհանակառության բանվորների հաշ-  
վին, ապա այստեղ մենք պիտի ծավալենք մեծ աշխա-  
տաք:

Դետք ե Մ. Տ. Կայանների և խորհանակառություն-  
ների լավագույն առաջավոր բանվորներին՝ զրանց թը-  
վում և բավագույն, առաջավոր մասնագետներին՝ քա-  
շել կուսակցության մեջ:

Մ. Տ. Կայանների և խորհանակառությունների  
բանվորներին կուսակցության մեջ քաշելու աշխա-  
տանքը բավարար կերպով չի ծավալված:

Ինչ վերաբերում է կողմնականներին կուսակ-  
ցության մեջ ներդրավելուն, ապա այստեղ պիտի լի-  
նել ամենի զգույշ և չլեկավարվել քանակով՝ զյուղա-  
կան շրջանային մեծ կուսակղմակերպություն ունենա-  
լու կամ ամեն մի կողմնակառությունում կողմնական  
խոշոր բջիջ ունենալու ցանկությամբ: Միայն այս դա-  
տովությամբ յերբեք չի կարելի դեկավարվել, կոլորն-  
ականներին կուսակցության մեջ ընդունելու դեպ-  
քում:

Մենք պիտի կուսակցության մեջ ընդունենք ամե-  
նալավ կողմնականներին, կուլակի դեմ, կոլտըն-  
ակառության աշխատանքների լավ ցուցանիշների, կու-  
սակցական գլխավոր գծի համար մղած պայքարում  
սոսուղմածներին: Այդպիսիներին կուսակցության մեջ  
մենք պիտի ընդունենք: Մենք վոչ մի բոպե չպետք ե  
մոռանանք, վոր կողմնակառություններում դեռ կան և  
կիննեն սեփականատիրական արամագրություններ, վոր  
այսորվա կողմնականը—դա յերեկվա սեփականա-  
տերն և: Նրան պետք ե վերափոխել, մշակել, նբա վրա-

զեռ շատ պիտի աշխատել։ Հարկավոր ե հիշել, վոր գեռ կուլտային տարրերը թափանցում են կոլտնտեսության մեջ, վոր կոլտնտեսական դործին զեռ ընդիմագրություն կա այնտեղ։ Մենք այդ չպիտի մոռանանք։

Այս բոլոր արամադրությունների աղղեցությունը կոլտնտեսական կուս։ բջիջի վրա չափազանց ուժեղ ե։ Յեթև այդ բջիջները կազմված լինեն ամենառաջալոր, թշնամու գեմ կոլտնտեսության համար մզված պայտարում կոփված մարտիկներից, հասկա այդ աղղեցությունը ասրաւակին չի չի։ Այդպիսի բջիջը կարող է իրեն հակադրել թշնամու և անկայուն ելեմնտների ճնշմանը։ Ահա թե ինչու կոլտնտեսականների մասսայական և անխորի ընդունելությունը կուսակցության մեջ, կարող է կոլտնտեսական բջիջը կեղտոտել անկայունների հասկայուն ելեմնտներով։ Իսկ այդ միայն կթուլացնի բջիջի սեղը, կթուլացնի նրա զիմադրական ընդունակությունը կոլտնտեսականների մանր սեփականատիրական տրաղիցիաների հանդեպ, միաժամանակ կոլտնտեսության գեմ ուղղված թշնամի հոսանքների դեմ տարվող պայքարում։

Ինչ վերաբերվում է կոմյերիտական բջիջներին, առաջ մենք պիտի աշխատենք, վոր յուրաքանչյուր կոլտնտեսությունում լինի կոմյերիտական բջիջ։ Տեղին ե ասել, վոր մեր կոմսումոլը այդ աշխատանքը համապատասխան կերպով չի ծավալել։ Խորհունտեսությունների և Ռ. Տ. Կայանների հենակետային բջիջները պիտի շատ խորջ ողնություն ցույց տան կոմյերիտի կությանը այն բանում, վորպեսզի յուրաքանչյուր կոլտնտեսությունում կազմակերպվի կոմյերիտական բջիջ։

## ԱՌԱՋԻԿԱ. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՄԱՍԻՆ

Գյուղական կուսակցիների հիմնական աշխատանքներից մեկը առաջիկա բերքահավաքն ե։ Բերքը պետք է հավաքել վոչ այնպես, ինչպիս անցյալ տարի։ Առաջիկա բերքը պիտի հավաքել ավելի լավ, առանց կորսատի, կամ ամենամինիմալ կորուստով։ Դրա համար մենք ընթացիկ տարում ունենք ավելի խոչոր հեարավություններ, մեծ փորձ, շատ մեջնաներ, կօլտնտեսականների ավելի գիտակցություն և ակտիվություն։ Մեղ անհրաժեշտ է հաց հավաքել վոչ պակաս, այլ ավելի, քան անցյալ տարի։ Այս տարին հնդամյակի յերրորդ վճռական տարին ե։ Այս տարի մենք գործի յենք գցում խոչոր թվով նոր կառուցված գործարաններ։ Այս տարի պիտի ներդրենք նշանակալից միջոցներ կառուցվող գիտանտգործարանների համար, վօրոնք գործի կանցնեն 1932 թվին։ Այս տարի մենք ներմուծում ենք արտասահմանից նոր կառուցված և վերակառուցված գործարանների համար հսկայական քանակությամբ սարքավորում։ Մենք պետք ե այս մեջնաների համար վճարենք, բայց վորպեսզի վճարենք, պիտի վրեարման միջոց ունենանք։ Դյուզում և քաղաքում կան ելեմենտներ, վորոնք ձայնակցում են մեր թշնամիներին, վոր գժվար ե վճարել և չափաղանց շատ պետք ե վճարել։ Զի՞ կարելի արդյոք թուլացնել, վորպեսզի հեշտ լինի վճարել։ Բայց այս ելեմենտներին չպիտի հավասարվել, այլ պետք ե պայքարել նրանց զեմ։

Մենք մեր յերկրում անց ենք կացնում ինդուստրացում, մենք մեր յերկրում կառուցում ենք սոցիալիզմ։ Այդ հեշտ գործ չե։ Այդ պահանջում ե ուժերի մեծ լարվածություն, բայց կիրակայան կամք, նա պահանջում

և միջոցների և ուժերի հսկայական ծախսում։ Նոր կտոր սույն պահանջման համար կարող են մշակել խոշոր քաղաքական բյուջեները կամ ույթատեսական հումույթ, վուշ, կանեփ, ճակնդեղ, բամբակ և այլն։ Աւրեմն և յերկիրն ավելի ու ավելի արդյունք կստանա բանվորների և գյուղացիների համար։ Մենք պետք ե աշխատենք, վորապես պեսզի այդ կուլտուրաների ցանքի ծրագրերը կատարվեն և գերակատարվեն։ Բերքահավաքը ժամանակին կաղմակերպելը հանդիսանում և հնդամյակի յերրորդ վճռական տարվա կարևորագույն ինդիրներից մեկը։

Ահա թե ինչու առաջիկա բերքահավաքին մենք պետք ե լիովին ոգտագործենք այն հսկայական հնարակ վորությունները, վոր մենք ունենք գյուղում և այդ գեղքում բայլչելիկյան բերքահավաքը ապահովված կլինի։ Իսկ վորպեսզի յեղած բոլոր հնարավորությունները, ներքին ուժերը և ուսուրաներն ողտագործենք, զրա համար հարկավոր և բայլչելիկյան լուրջ նախապատրաստությունն և աշխատանք։ Բերքահավաքի այս կաղմակերպչական բայլչելիկյան նախապատրաստությունը տեղական կռասկաղմակերպությունները պիտի կատարեն առանց հետաձելու։



ՀՀ Ազգային գրադարան



NL0189045

ЧИСЛ 7 509. (8/4 в.)



Н. П. ПОСТЫШЕВ

О РАБОТЕ КОЛХОЗНЫХ ЯЧЕЕК И  
РУКОВОДСТВЕ ИМИ

Госиздат ССР Армении  
Эривань - 1982